

ԵՐԿՐԻ ՄԻՋՈՒԿ, երկրագնդի կենտրոնա-
կան ուղորտը: Սկսվում է 2900 կմ խո-
րությունից և պարփակված է Երկրի ման-
թիայի մեջ: Ե. մ-ում ամփոփված է Երկրի
զանգվածի 31,5 %-ը և ծավալի 16 %-ը:
Այնտեղ ճնշումը 130000—4250000 մթն է:
Կազմված է ներքին (կորիզ) և արտաքին
միջուկներից, համապատասխանաբար՝
1288 կմ և 3469 կմ շառավիղներով: Ենթա-
դրվում է, որ արտաքին միջուկը կազմված
է հեղուկ վիճակում գտնվող, բարձր ճնշ-
ման տակ մետաղական հատկություններ
ձեռք բերած երկաթի և մագնեզիումի սի-
լիկատներից: Նյութի խտությունը 9660—
12420 կգ/մ³ է: Ներքին միջուկը պինդ է,
հավանաբար երկաթի ու նիկելի խառ-
նուրդ է, և ունի 12910—19360 կգ/մ³ խտու-
թյուն: Տես նաև *Երկիր*:

ԵՐԿՐԻ ՄԱՆԹԻԱ, Երկրի միջուկի և երկրակեղևի միջև գտնվող «կարծր» պատյանը: Ունի շերտային կառուցվածք, բաժանվում է ստորին և վերին մանթիայի: Երկրակեղևի տակ, մայր ցամաքների սահմաններում մինչև 80—100 կմ խորությունը և օվկիանոսային պլատֆորմների սահմաններում մինչև 50 կմ խորությունը, Ե. մ. պինդ սիլիկատային նյութ է և կոչվում է սուբստրատ: Վերջինիս տակ, մինչև 400 կմ խորություն, նյութը կիսահեղուկ է և կոչվում է Գութենբերգի շերտ կամ ասթենոսֆերա: Ավելի խոր՝ մինչև 900 կմ, սահմանազատվում է վերին մանթիայի երրորդ, ավելի խիտ շերտը (Գոլիցինի շերտ): Ստորին մանթիան տարածվում է 900—2900 կմ խորություններում և համեմատաբար համասեռ է: Ե. մ-ում կուտակված է Երկրի զանգվածի 67%-ը և ծավալի 83%-ը: Ենթադրվում է, որ Ե. մ. հիմնականում կազմված է O, Si, Mg և Fe տարբեր կառուցվածքային խտության միացություններից, որոնք սինթեզվում են գերբարձր ճնշումների տակ: Տես նաև *Երկիր*: